ՇՎԱԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ

784
Հ-96

E-2008

# ՆՈՒԱԳՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ

## ՏԵՏՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

ՈՐ ՊԻՏԻ ՊԱՐՈՒՆԱԿԷ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՆԵՐԲԵՄՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԿԱՄ ԱՍԻԱԿԱՆ ՆՈՒԱԳՆԵՐ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԹՆԱՐՈՎ ՆՈՒԱԳԵԼՈՒ ՅԱՐՄԱՐ ԴՐՈՒԹԵԱՄԲ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

Ա. ՇՐՋԱՆ. ԹԻՒ. 12.

Չար մարդիկ երգ չունին.
(Շէքսպ.)

*Շրջանը 24 թիւ է, որ հետզհետէ պիտի հրատարակուի: 24 թիւերու բաժանորդագրութեան գինն է 40 ղուրուշ մեճիտ կանխիկ. մէկ թիւը 2 ղուրուշ մեճիտ: Բաժանորդագրութեան և վաճառումի տեղերն են՝ Գալաթա Քէօփրիւ պաշը Եօղ Կեչէր խան թիւ 63 երաժշտութեան գործատու փոխադրեան կարապետ Լիֆոնտիի սենեակը, Մէրճան չարշըն Վ. Յ. Մարգարեանի և Գ. Սրապեանի, և Բերան չարշը պաշը Գ. Ֆրէնկեանի, Զագմագճըլար եօգուշու թիւ 20 Յ. Գավաֆեանի և Նէնի ճամի Չիլինկիրճիլեր ճատտէսի թիւ 2 Ս. Ղուկասեանի գրատունները և ուրիշ Հայ գրավաճառաց քով. և Սիւմալեանի խանը թիւ 47 Ե. Մ. Տնտեսեան տպարանը, ուր տեղ պէտք է ուղղել հրատարակութեանս վերաբերեալ ամեն գրութիւն, և ուր ձայնական երաժշտութեան դասեր ալ պիտի աւանդուին խնդրողաց:*

*(Ազգային երաժիշտներէն և գրագէտներէն ով որ երգ ու եղանակ ղրկէ՝ պիտի ընդունուի և ըստ յարմարութեան պիտի հրատարակուի հեղինակին անուամբ:)*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*Արտասուք.*

E--2002

Կ. ՊՈԼԻՍ

1880

ՏՊԱԳՐ. Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

2013
784
3/820
(952-2008)
529-2017
II Ա
Ա-940
(5011)


(moderato.)
dolce.


# ԱՐՏԱՍՈՒՔ

Տըխուր անուրջք երբ անտառ
Առնուն տանին զիս մոլար,
Եւ հոն դըժգոյն ծաղկըներ
Յիշեցունեն ինձ իմ սէր,
Երբ փըղձկի սիրտըս զեղուն
Զըր տոկալով իւր ցաւուն,
Ցօղեցէ՛ք աչերէս
Արտասուք սըրտավէժ,
Դուք իմ վըշտին
Ցօղ դառնացին։

Կենաց դարնան մէջ մի կոյս
Նայեց տարփով աչերուս,
Յուսացի որ իւր շընչով
Ա՛լ բաղդն իջնէր պիտ՝ իմ քով։
Երբ յանկարծ նա սիրալիր
Փակեց յաւէրժ աչքն ի նիրհ.
Ցօղեցէ՛ք աչերէս, եւն։

Աշխարհի բարձք ու պերճանք
Ջեղան վըշտիս մի սփոփանք,
Ի զուր նորէն ուզեցին
Կապել զիս այս աշխարհին.
Բայց քու հոգիդ, կոյս թըշուառ,
Բնակի յիս միշտ խանդավառ.
Ցօղեցէք աչերէս եւն։

Յ. Շահնազար.

ՀՀ Ազգային գրադարան
NL0514408

529
[illegible]